

**ՀՀ Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը Կաթնաղբյուրում Մուշեղ
Գալշոյանին նվիրված միջոցառման ժամանակ**

13.02.2013թ.

Այսօր Մուշեղ Գալշոյանի 80 ամյակն ենք նշում գրողի ծննդավայրում Գալշոյանի հարազատների, բարեկամների, ընկերների հետ միասին:

Թանկ են բոլոր հնչեցրած հուշերը՝ կապված գրողի կյանքի եւ ստեղծագործության հետ: Գալշոյանական արվեստը ազգապահպան կոչ է՝ ուղղված բոլոր սերունդներին: Հնարավոր չէ կարդալ նրա ստեղծագործությունները եւ չոգեշնչվել իր իսկ ստեղծած հերոսների հայրենասիրությամբ:

Խոսում էր նա հայդուկի, հայ մշակի անունից այնպես, որ կարծես դու երկխոսության մեջ ես: Նրա գերեզմանին դարձյալ հայդուկի քանդակն է, իր հոգսերով եւ երկար պատմություններով:

Սիրելի Սիրանույշ եւ Տավրոս՝ Գալշոյանի զավակներ, որպես 80 ամյակի նվեր, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի նախաձեռնությամբ կստեղծվի „Ձորի Միրոս“, գրքի աուդիո տարբերակը: